


ԱՐԴՅՈՒՆ

# ԱՐԴՅՈՒՆ



ՀԱՅ ԲԱՆԱՏԵՂՆՈՒԹՅԱՆ ՄԵԶ

ԼՈՒՅՇ ԲՈՒԺ

ՑՐԵԿՈՒՑ

1940

891.99.09 3.525

№-26 Киргизия.  
Киргизия 1959.  
Киргизия 1959.

891.99.09

7-96

Հ. ԴԱՐՅԱՆ

L'pray

g1 (-o)(56)


ԱՏՎԵԼՎԱԾ Է 1981 թ.

экземпляр

30998

## ԱՐԱԳԱՆՑ

## ՀԱՅ ԲԱՆԱՏԵՂՆՈՒԹՅԱՆ ՄԵջ



ԽԺԲԱԳԻՐ՝ Ս. Ղաղարյան  
Տեխ. խժբագիր՝ Հ. Կարապետյան  
Կոնտ. օրբագրիչ՝ Մ. Պարոնիկյան  
Հանձնված և արտադրության 1940 թ. սղոստոսի 31-ին  
Ստորագրված և տպագրելու 1940 թ. սեպտեմբերի 23-ին  
Վ. 733, հրատ. № 69, պատվեր № 201, տիրած 1500

Լուսնը ոք տպարան, Եկեղեց, Տերյան № 127

## ՀՅՈՒ ԺԱՑ ԹԱԹՈՅԲԻ ՏԱՐԱՎԱՐՄԱՆ ՅՈՒ ԴԵՐՈՒՅ

### ՅԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Այս Աւելագածը հայ բանաստեղծության մեջ վերնազրով այս աշխատությանը զիրկու գործը յես ձևոնարկել եմ որպանց մի քանի տարի առաջ, հատկապես մասսայական տուրիստական-ալպինիստական խմբերի համար, վարոնք վերելքներ են կատարում զեղի Արագածի կատարները Մեր հիմնական նպատակն է յիշել տուրիստ և ալպինիստ ընթերցազնիրեն հանոթացնել հայ գործների այն բանաստեղծություններին, վորոնք նվիրված են Արագածին Աւատի այդ բանաստեղծությունները տրվում են վշչ կարճ մեջարումների ձևով, այլ լրիվ, համաբեկով, վոր այդ ոգագար և հետաքրքիր կլինի Արագածի վրա ճամբուրդություն կատարող ամեն մի եքսկուրսանոր համար Ավելորդ շնոք համարել Արագածի նկարագրության հիմ միատեղ տալնակ գորոշ անհրաժեշտ տեղիկություններ Արագածի պատմության և աշխարհազրության մասին: Հետաքայում մենք հրատարակելու յնք տուանձին գրքերով յերկու աշխատություն ևս՝ Աւելագածը հայ ժողովրդի պատմության մեջ և Աւելագածի աշխարհազրությանը: Անշուշտ տարեց-տարի, դեպի Արագածը յեղած հիմուրը բուրության անմասն հնու զուգընթաց միծանում և նաև Արագածին վերեցող անհրաժեշտ գրականության պահանջը: Մեր թե այս և թե հետազարոցյունները գեթ մասամբ լրացնելու յին այդ բնագավառում յեղած բացը:

Վ, Դ,

ՅԵՐԵՎԱՆ, 1940 թ.

## ԱՐԱԳԱԾԸ ՀԱՅ ԲԱՆԱՍՏԵՂ ԾՈՒԹՅԱՆ ՄԵԶ

«...Յերանի՛ թե մեկ որ մեր բնագետ յեղբայրակից-  
ներից մեկը ուրախացներ մեզ մի՛ ուսումնական շրջանից-  
թենուքյամբ Արագածի վորապիտուքյամ, թե վուլկանակա-  
նուքյամ, թե յերկրաբանուքյամ և թե հանբարաբուքյամ  
վերաբերուքյամբ: Իսկ թե չանձրանա, բացի սոցանից  
գործ դմել և զերմաշափ և ծանրաշափ և մագմիսյան ալաք և  
մանրացուց, յերե ուշադիր լինի Արագածի բռյաշերին,  
տունկերին և մրա վրա ապրող կենդանիներին, այն ժա-  
մանակ մեզ կմնա Վ.Օ. ՄԴԱՅՑՆ ՇՆՈՐՀԱԿԱԼ, ԼԻՆԵԼ, ՆՈ-  
ՐԱՆՆԻՑ (այսինքն՝ Արագածից Վ. Դ), ԱՅԼ, ՅԵՎ, ՊԱՐՄԵՆԱԼ,  
ՆՈՐԱՆՆԻՎ, ՅԵՎՐՈՊԱՅԻ, ԱՌԱԶ»: \*)

Մ. ՆԱԽԱՆԴՅԱՆ «Յերկեր». և 181

Լայնածավալ Արարատյան դաշտում՝ գեմհանդիման կանգ-  
նած են յերկու հնագույն լեռներ, վորոնք դարեր շարունակ ա-  
ռատ աղբյուր են հանդիսացել մարդկային յերեվակայության  
համար: Դարեր շարունակ բազմաթիվ կիսավայրենի ցեղեր և հին  
աշխարհի քաղաքակրթված ազգեր են անցել նրանց փեշերով,  
նրանց մասին հորինելով բազմաթիվ առասպելներ, յերգեր ու  
վիպասանություններ:

Արարատը — վիշտազգուների հայրենիքը — անհրապույր,  
քարքարոտ, գեվերով լի, իսկ Արագածը՝ ընդհակառակը, ջրառատ,  
սառնորտի աղբյուրներով, կանաչի և ծաղիկների բուրմունքով,  
հստակ լեռնային ողով:

Հին սար և Արարատը, գրա համար ել ասում ենք «Ալե-  
հեր Արարատ», յունածածկ, սպիտակափառ:

Դորքան հոյակապ լեզենդներ կան կասմած այդ սարի հետ...

Ալեհեր Արարատն առաջին անգամ իր լանջերին հյուրընկա-  
լել և ուրարտական տիրակալներին իրենց հորդաներով:

Խալքական հզոր պետությունն ստեղծողը, հին արևելքի խո-  
շոր տիրակալը, Վանի թագավորության հիմնադիրը՝ Արգիշտին,  
վորի անվան հետ են կապում խալդագետները նաև Արագած սարի

\*) Ընդգծութեներն իմ են.

անվան ծագումը, մեր թվադրսությունից 7—8 դար առաջ Արարատի վրայով և անցնում դեպի հյուակս, իր աշխարհակալական ծրագրերն իրազործելու համար:

Արարատյան բարգավաճ դաշտում դեպի յերկինք խոյացող սրածայր Արարատի գագաթները հայ ժողովրդի պատմության լուս վկաներն են յեղել յերկու հազարից ավելի տարիների ընթացքում։ Արարատի հետ և կապված յեղել համաշխարհային ջրենդեղի և Նոյի տապանի առասպելները։

Ահա թե ինչո՞ւ յերկար տարիներ այդ սարը համարվել և ուրբաղան» սար, և վերելքը դեպի նրա գաղաթները՝ անհնարին։

Յեզ այդ և պատճառը, վոր Արարատը դեպի իրեն և դրավել բազմաթիվ խոշոր զիանականների, ինչպիս նաև հայ ժողովը պատմիչներին՝ սկսած հնագույն ժամանակներից։

Սակայն Արարատը հայ ժողովրդի յերգերի և առասպելների մեջ հայտնի յե վորպես «Ազատն Մասիս», Ռով կարող և տէրել Արարատյան աղատ յերկիրը, քանի կա «Ազատն Մասիսը», վորտեղ ապրում են հոգոր քաջքերը, վորոնք պաշտպանում են իրենց բնակավայրը մարդկային ներխուժումից և խորն անդունդներն են քաշում, տանում յուրաքանչյուրին, ով կհամարձակվի վոտք կոխել նրա նվիրական սահմանները։

Այսպես և պատկերել Մասիսը հայ ժողովրդի պատմագիր Մոլսես Խորենացին։ Ահա այս «մութ աշխարհում»՝ «քաջքերի», «վոզիների» մութ քարանձավներում և շղթայլած Արտավազդը, վորի շղթաները ամրացնում են դարբինները և թույլ չեն տալիս, վոր նա դուրս գա, աշխարհը կործանի։

«Յեթե դու վորսի յելնես դեպի աղատ Մասիսը, քեզ կբռնեն քաջքերը, կտանեն աղատ Մասիսի վրա, այստեղ կմաս և լույս չես տեսնի» (Մովսես Խորենացի)։

Կամ՝ ինչպես լանաստեղծ Հ. Հովաննիսյանն և դրում։

«Զարկեցնք, դարբիններ, կուանը սալին,

Զարկեցնք կուանը—շղթայքն ամրանան,

Անիծյալ արքայի կապանքն ամրանան,

Զարկեցնք, դարբիններ, կուանը սալին։

Ահարկու ամպերն յեկան ժողվեցան,

Մեր Մասյաց ճակտին սև քող փաթթեցին.

Դուռում և փոթորիկ գազանի նման,

Հառաջում, սուրում և կատաղած քամին։

(Հով. Հովհաննիսյան, «Բանաստեղծություններ», եջ 67)։

Ահա այսպես, հայ ժողովուրդը վաչ մի լսով խստք չաւնի: Արարատի մասին, վոչ մի յերգ ու գովասանք, այլ ընդհակառակը՝ անեծք և նղովք ունի:

Այլ և Արագածը: Արագածի մասին հայ ժողովուրդը և նրա ստորոտին ապրող բոլոր ժողովուրդները—ազրեցանցիները, քըրդերը—միայն մի լան են ասում՝ «Ճան Արագած»:

Յազ գյալանդան

(Քարնան գալով

Զիշագլյարը աչըլըր,

Ծաղիկները բացվում են,

Բու գաղլարըն

Այս սարերի

Արդարի սան, Ալազյալ:

Սարդարն ես դու, Ալազյալ):

Արագածի հոյակապ ջրաբաշխական սիստեմը, վոր կյանք և տալիս ջրագուրէ ընդարձակ տարածությունների, հայտնի յի նրա ստորոտին ապրող ժողովուրդներին հնագույն ժամանակներից, սառնորակ աղբյուրները, վորոնք գետնի տակով հսկայական տարածություններ հոսում են գետի շրջակա գյուղերը, այս բուլորը հանդիսացել են այն հզոր ուժը, վորի շնորհիվ սիրել և աշխատավոր ժողովուրդն այդ սարը և սրտարուխ յերգեր և հյուսել նրա մասին.

Արագածը բարձր տեղ և,  
Զուրը հիվանդի ղեղ և:

Արագածը Արարատի նման «քաջքեր» և «գեեր» չաւնի. Արագածի վրա կան լեռնային մեղմիկ ավաշող գեփիյուռ, քաղցրահնչում մանկներ, սեր և գուրգուրանք, լեռնային գետակների կարկաչ և ծաղիկների անուշ բուրմունք: Ահա թե ինչո՞ւ հայ խոշորագույն լիրիկ, տաղանդավոր բանաստեղծ Ավետիք իսահակյանը իր բանաստեղծական մեծ ներշնչումներն ստանում ե Արագածից: Պոհան իր սրտի քնքույց լարերով, վեհ հուզումով յերգում ե Արագածը: Ամենայն իրավամբ կարելի յի ասել, վոր հայ խոշորագույն բանաստեղծն իր լավագույն յերգերի ներշնչումներն ու մտահղացումներն առնում ե Արագածից՝ հատուկ տեղ տալով Արագածի մանիներին.

Արագած՝ աստղերի մեջ՝

Ագամանդե թագը զվահին,

Սարերեն վեր, ամպերեն վեր,

Թիկն և տվել զմբուխտ—զահին:

Սինամ—հավքի թեր՝ ունիմ,  
 Թռնիմ կ'երթամ Արագած,  
 Ճակտիս աստղե պսակ ունիմ,  
 Արտիս միջին—զառ յերազ,  
 Կամ՝  
 Արի զիրկս, մարմար Զարոս,  
 Թոչենք, յերթանք Արագած:

Արագածը մեր յերկրի բոլոր սարերի մեջ ամենից լայնաւնիստն է, ամենից հարուստն իր առատ բուսականությամբ և ծաղիկներով: Արագածի վրա հաշվում են մոտ 10 հազար զանազան տեսակի ծաղիկներ:\*)

Մինչև հյուսիսային ամենաբարձր գագաթը (4096 մետր ծ. մակ.), քարածերպերին, հովիտների մեջ և բլուրների կատարներին, ձյունաշերտերի արանքներին, ամեն տեղ և ամեն քայլափոխում հանդիպում ենք բազմաթիվ անուշահոտ ծաղիկների: Պատկերավոր ասած՝ կանաչ գորգերի սար և Արագածը: Մինչդեռ կովկասյան լեռնաշղթայի ամենացածր գագաթներն անդամ, դեռ 3 հազար մետր բարձրությունից, ծածկված են հավիտենական ձյունաշերտերով և սաղցաղաշերերով, ինչպես որինակ՝ Ելբրուս սարի հարավային լանջին Աղաու սաղցաղաշտը, Դոնդուզ—Ռունի, Կաղընկի լանջերը և այլն. այստեղ, Արագածի վրա, ընդհակառակն ե—ամառվա ամիսներին ամենաբարձր գագաթներին ծաղիկներ են ծաղկում, և գագաթների տակ զիշերելը մեծ հաճույք և պատճառում տուրիստներին: Քառակազաթ Արագածի ամենաբարձր լանջին, մինչև 3600 մետր բարձրության վրա, ամառվա բոլոր ամիսներին կոլտնտեսային հոտն և արածում և մեր յերշանիկ յերկրի կոտոնտեսական հովվի լիաթոք յերդն է հնչում:

Դուն Արագած, ալմաստ վահան,  
 Կայծակեղեն թրերի,  
 Գագաթներդ՝ բյուրեղ վահան  
 Թափառական ամպերի

\*) ԽՍՀՄ Գիտությունների ակադեմիայի բըիգագը, ակադեմիկ Աերի գեվի գլխավորությամբ՝ 1932 թ. հատուկ ուսումնասիրության յենթարկեց Արագածը գեղողիական և բուսաբանական տեսակեալց: Ուսումնասիրության արդյունքները գետեղված են յերկու ստվար հատորներում (սուսերեն լեզվով), վորտեղ մանրամասն նկարագրված են նաև Արագածի ծաղիկները:

Սեղ ժայռերդ՝ արծվի բուն,  
Լճակներդ՝ լույս—փերուզ.  
Առուներդ՝ մեջքիդ փայլուն,  
Պերճ գոտիներ վորկեհյուս:

Աղբյուրներդ գիշեր ու դոր  
Խոսքի ըոնված իրար հետ,  
Վատակներդ՝ զիլ ու գոր,  
Աբրեշումն փեշերեդ:

Թիթեռներդ՝ հուր հրեղնն,  
Թոչող—ծաղկող ծաղիկներ,  
Զառ ու դարձմանք յերազներեն,  
Պոկված ծվենի—ծվիկներ:

Ծիրանավառ գնեն թագուճի,  
Բուրմունքների գնեն աղբյուր,  
Ծաղիկներդ հազար գույնի,  
Հազար անուն, հազար բույր:

(Ավ. Խահակյան)

Արագածն ունի մի քանի հովիտներ, Արևմտյան կողմում  
եւ, նիկ գալապում (այժմ Ապարան) Գևդհավիտը (Դալիչայի  
հովիտը), վորտեղից հոսում եւ Ըարկաշահոս ու ծիծաղապնաց<sup>\*)</sup> Գեղհովիտ գետակը, Յաղցր ջրերի հովիտը, Լճակը  
ների հովիտը, Աև ջրի հովիտը, խակ նըա հակառակ կողմում  
ընկած եւ Մանթաշը հովիտը, վորտեղով հոսում եւ Կարկաշուն  
կոչչած փոքրիկ արագավազ գետակը, Վարդիթավագում եւ Արտև-  
րյան գետի մեջ: Մանթաշը հովիտը Արագածի ամենազեղեցիկ  
հովիտներից եւ, վորտեղ բռւնում են վայրի շուշանը, լեռնային  
կակաչը և բազմաթիվ այլ ծաղիկներ:

Մանթաշին նվիրած իր լանաստեղծության մեջ մեր մեա-  
ծանուն բանաստեղծը զովում եւ այդ «յերազհովիտը», նրա  
զմբուխտե որորոցը և լուսափիթիթ, մետաքս-ծածկոց ծաղիկները,  
նըա բյուլեղ զանգեղին նմանող աղբյուրները, հուրեավեկը  
արծաթ թերով, վորմաք վոսկե հեքիաթներ են պատմում դյու-  
թական աշխարհներին և բանաստեղծին «նանի» են ասում:

\*) Ալիքան, «Այլաբառեալ»

Ե՞լ, Մանթաշի յերազհովիս,  
Դուն, զմբուխտե որորոց,  
Ծաղիկներդ լուսափթիթ՝  
Վերաս մետաքս—վառ ծածկոց:

Աղբյուրներդ՝ բյուրեղ զանգեր,  
Հովերդ անուրջ կըերեն,  
Մոռացումի թովիչ յերգեր,  
Հովերդ անուշ կնըորեն:

Հուր-հավքերդ՝ թիերն արծաթ,  
Կտուցները՝ լալ-մարջան,  
Ինձ կպատմեն վոսկի հեքիաթ,  
Աշխարհներեն դյութական:

Ալմաստ առուն, մող պես անքուն,  
Նանիկ կասե, որ, որ, որ.  
Անուշ նանին զառ մանկության,  
Նանի, նանի, որ, որ, որ:

Բնությունը լեզու յե ստանում իսահակյանի մոտ, Արագա-  
ծը նրա համար գառնում և իր իղձերի, հույզերի և հույսերի  
թարգմանը: Նա հանգստություն և գտնում Մանթաշի փեշերին,  
Մանթաշի թոշուններին և գիմում իրեն հետ խոսելու, իր սիր-  
աը սիրուհու նման յերկինք տանելու:

Հեք Արագած, ալ-լալ հագեր  
Աւոր կը թոնիս իմ յերգիս պես,  
Սրտիս խորքեն յիլել—կանգնել  
Յերկինք կերթաս իմ սիրու պես:

Թու լալաղար ծիծուն ծաղկունք  
Իմ վարդ սերեն բույր կառնեն,  
Զառ Մանթաշի թիւ ու թոշունք  
Իմ բլրուկեն ձեն կառնեն,  
Հեյ ջան, հա ջան,—ցողն ու ակունք  
Սրտիս խորքեն ծին կառնեն:

Այնուհետեւ Արագածի պերճ գորգերն ու ծաղկունքը այսպես  
և յերգում Ա. իսահակյանը.

Արագածը իրար վրա  
Իր պերճ զորդերն և փոել  
Պերճ զորդերով քար ու քռայ  
Քյոշքերի պես զառազուգել

Վասո վարդերի տոնն և այսոր,  
Հարս ու աղջիկ զարդարուն՝  
Պտույտ կուզան որոր-ոբոր  
Վարդափթիթ լանջերում:

Ու աղախի կը թոցնեն՝  
Զյուների պես սպիտակ  
Իրար վրա ջուր կցանեն,  
Աղբյուրներեն անապակ:

Պոնտի նուրբ հոգու համար այնքան դյութիչ ու հմայիչ և  
իր հայրենի յերկրի ամեն մի գեղեցիկ անկյուն և, հատկապես,  
իր սիրած Արագածը, վոր ցանկություն և հայտնում մեռնելուց  
հետո թաղվել Արագածի լանջերում, ծաղիկների բուրմունքի մեջ:

Յես վոր մեռնեմ, ինձի թաղեք  
Ալագյաղի լանջերում,  
Վոր Մանթաշից հովերը գան,  
Վրաս հելվան ու յերթան:

Զմռան ամիսներին Արագածը դառնում և անմատչելի. Նրա  
գաղաթները և լայնանխատ լանջերը, մինչև շրջակա դաշտավայշ-  
րերը, ծածկվում են սպիտակ սավանով. սառչում են զիաները,  
փոքրիկ լեռնային խաղաղ ու անդորր լճակները, փակվում են  
ճամբաները, և հաղորդակցությունը բնակելի վայրերի մեջ դառ-  
նում և անհնարին: Անա թե ինչու դանատեղծ հովհաննես Հով-  
հաննիսյանն իր մի բանաստեղծությամբ արտահայտում և իր  
յարից հեռու ապրող սիրահարի փափակը, հույսը, թե յերբ պետք  
ե բացվեն Արագածի սամրեքաւը վոր նա գնա, հասնի իր  
յարին:

Ալագյաղ բարձր սարին,  
Զին ա կիտվել կատարին,  
Սարի ճամբեք, բաց ելեք,  
Եթամ, հասնեմ իմ յարին:

(Հ. Հովհ. «Յերկերի ժողովածու», I հատ., էջ 158):

Այդպես և յերգում և մտածում Արագածի մասին նաև ժողովուրդը:

\*

Ամեն տարի, թե բքաշունչ ձմռանը, թե ամառվա արևակեղամիսներին, հարյուրավոր յերիտասարդ տուրիստներ և ալզինիստներ վերելքներ են կատարում դեսպի Արագածի կատարները:

Արագածը, մկանած իր ստորոտից մինչև չորս զաղաթները, դարձել և մեր ժողովրդի համար մի հաճելի զբոսավայր հաղարավոր կոլտնտեսականներ իրենց հոտերով ամբողջ ամառն անց են կացնում Արագածի վրա:

Այժմ, յերբ մենք թերթում ենք անցյալ դարի նշանավոր ճանապարհորդների՝ Արիիի, Վազների, Պաստուխովի և մյուսների նկարագրությունները, մեզ զարմանալի և թվում, թե ինչպիսի խորհրդագրությամբ են նկարագրում այդ գիտնական-ճանապարհորդներն իրենց կատարած վերելքները դեպի Արագածի գաղաթը:

Ռուս հայտնի տուղթը Պաստուխովը, վորն Արագած և բարձրացել 1848 թվին, պատմում և, վոր իրենց առաջնորդում ելին զինված կողմակներ, և վոր նրանք փրկվեցին քյուրդ ավագակների հարձակումից միմիայն շնորհիվ իրենց ուղեկցող այդ կողմակների:

Այժմ տուրիստական խմբելը գիշերում են Արագածի ովատահական բոլոր ծերավերում՝ բացովիյա, թափշա կանաչի վրա, գլուխն աղբյուրների և արագահոս գետերի մոտ:

Կոլտնտեսային հոտը պահապանների կարիք չունի, այն պահպանվում և միմիայն պատահական գայլերից, կամ նրանց խմբերից, Աղբյուրների, քուրդ և հայ յայլափորները ապրում են իրար կողքի, ովտագործում Արագածի բարիքները հավասարապես, յերգում ու միրում Արագածը, ինչպես ընդհանուր և հարազատ մոր, վոր հավասարապես մնունդ և տալիս բոլորին:

Ահա թե ինչու Արագածը ժողովրդական գովերգության, հիացմունքի և սիրո առարկա յերածել դարերից ի վեր բոլորի համար:

Այսպես և յերգում Արագածը աշուղ թումասողին, վորն Արագածը նույնիսկ ամբողջ աշխարհի հետ փոխել չի ցանկանում.

Յեղբայր, կոնկես լավ իմանաս,  
Մեր գուբեռնին երեվան ա,  
Երեվան կոչվում ա կավկազ,  
Մեր սարին կանեն Ալագյազ:

Մայիս, հունիս, այնուեղ ման զաս,  
Դրախտային ծաղիկն ա խառ,  
Ծաղիկ—ծաղկունք անպակաս,  
Հարուսանեցի կյանքն Ալագյաղ:

Ուսեմ Ալագյաղա մածուն,  
Կաթի սերը խամառ մարտն,  
Շատ անուշ ա չվաքի քուն,  
Ելյաթներու տան Ալագյաղ:

Ալագյաղա ծաղիկ շատ ա,  
Պաղ աղբըներ մեջն տառա ա,  
Սմառ լավ ա, ձմեռ վատ ա,  
Դրախտային դու Ալագյաղ:

Թումասողլի Գելորդի բան,  
Դարձյալ ախ կանեմ Ալարան,  
Ամրող աշխարհ յեթե ինձ տան,  
Քեզ չեմ փոխի, ջնն Ալագյաղ:

(«Հայ աշուգներ», Էջ 365):

Շիրակի յերդիչ աշուու Շիրակը այսպես և յերդում ձկներով հարուսատ զետերը, վաղ սարերի մեջ պատվական, բոլոր տղարի համար սիրելի, ամպերին հավասար, հոտավետ բուրաստան Ալագածը.

Անմահական հողիդ ու ջրիդ մեռնեմ,  
Ծաղկունքով դարդարված, կայտառ Ալագյաղ,  
Լանջիրիդ ման գալով կարուս առնեմ,  
Հոտավետ բուրաստան, պայծառ Ալագյաղ:

Շուրջգ լի խոխաջուն աղբյուր ու ակներ,  
Չորեր, թափեր, առուներ ու վտակներ,  
Դեսերումդ լիքն են պատվական ձկներ,  
Դար ու փոսդ ծառ ու անտառ, Ալագյաղ:

Բարձրացիկ ես ճիշտ ամօերին հավասար,  
Համբուրում ես նոցա իբրև սիրահար,  
Զուրդ անմահական, քարերդ ջուհար,  
Նաղիք ունես զու անմահական, Ալագյաղ:

Շիրակն եմ, զովեստ ճիշտ ու խկական,  
Վողջ սարերի մեջը դու յես պատվական,  
Սմբենայն ժողովուրդ քեղնից բավական,  
Դու ես անվանի ու մեծ սար, Ալագյազ:

(«Հայ աշուղներ», էջ 313):

Մեր աշուղներից շատ շատերը մեծ վովերությամբ այժմ  
յերգում են Արագածը, նրա ստորափն ապբոզ ժողովրդի փառքն  
ու պարծանքը, առատության և լիության սիմվոլը, համեմատելով  
այն մեր յերկրի հզորության հետ, վորաքս նոր կյանքի, փառքի  
հասանելի գաղաթ: Արագածի լոնջին և աղբում աշուղ Աշխուժը,  
վորը մանկությունից ճաշակել և Արագածի բարիքները, իր պա-  
պերի հետ յայլա յե գնացել Արագածի կրծքին, ծծել ենրա անա-  
ռական ողը և խմել սառնորակ ջրերը: Այժմ ծերացած աշուղ  
Աշխուժը այսուհետեւ յերգում:

Սիրուն զարնան գեղ թափուհի աննման, \*)  
Պասեներդ կյանքի զարդ են, Ալագյազ,  
Կարկաչանոս աղբյուրներդ մայրական  
Կրծքե բղբած անուշ կաթ են, Ալագյազ:

Զով հովերի, սղի, ջրի հենարան,  
Ամառային անուշ քնոս որորան,  
Գետակների, առուների յերգարան,  
Վառ աստղերն ել քեզ կսիրեն, Ալագյազ:

Նեկտարաբուխ ծաղկիներդ հոգեշունչ,  
Զառ փեշերդ ծաղկիներ են վոսկեփունչ,  
Կույսերի յերգ, հովվի սրինգ քաղցրահունչ,  
Իրար խասնված քնող կղովին, Ալագյազ:

Ճերմակ ամպեր քո շղարշն են հարսնային,  
Շողն ու շաղը սուրբ քրաբնքդ են զրախտային,  
Ցողով արրած վարդերիդ բույր բնածին,  
Սառած սրտին հուր կըշնչեն, Ալագյազ:

\*) Այս վատանավարը տպագրված ե առաջին անգամ, գըի յեմ առել  
յես՝ հեղինակի բնականից, 1939 թ. երսպեղիցիայի ժամանակ, Ղաղնաֆար  
գրադարան:

Վ, Պ,

Թոյ յերկնահուզ վնա կատարով ասագաղարդ՝  
Մաքառել ես շանթերի դեմ միշտ հպարտ,  
Զրկեմներիդ կոհակները հորդառատ՝  
Դաշտավայրիդ կյանքն ու շունչն են, Ալադյաղ:

Աշխույժ յերգչիս սուբբ որորան հայրենի,  
Նոր արևից քեզ աչքալույս արժանի,  
Վաղորդյան զով հովերի հետ զեղանի  
Քեզ նոր շողեր կը զուրգուրեն, Ալադյաղ:

\* \*

Արագածն ել ունի նույնքան հին պատմություն, վորքան Արարատը: Արագածի վրայով են անցել նրան տիրելու նուատակով, հին արևելքի բաղմաթիվ տիրականեր:

Մովսես Խորենացին շատ գեղեցիկ բառերով է նկարագրում Երադածը, անվանելով նրա լանջերից հոսող ջրերը «գեւահաս աղջիկներին շրջանցող յերիտասարդներ», Նկատի ունենալով, վոր սարը շրջապատող լեռների ստորոտների մոտ խփում են բազմաթիվ հստակ աղբյուրներ, վորոնց ջրերը միանալով՝ կազմում են հանդարտ գետեր ու շրջապատում լեռների ստորոտներն ու դաշտերի շրջակայքը: Համաձայն Մովսես Խորենացու «Պատմության» առասպելի, Հայկ Նահապետի ցեղից նրա վորդի Արմենակը բնակություն և հաստատում Արագածի վրա, վորի անունով և սարը կոչվում է Արագած—այդ մեր թվագրությունից 2026 տարի առաջ եր: Արմենակը իր ընտանիքի անդամների, վորդիների մեջ և բաժանում Արագածը, և բարգավաճում և այնտեղ մի հրաշալի կուլտուրա: Խնչպես յինթարքում են, Արագածն այն ժամանակ անտառպատ սար և յեղել և մինչեւ Արմենակ Նահապետի այնտեղ բնակվելը՝ այս սարի մոտ, ինչպես և մեր յերկրի զանազան տեղերում, յեղել և բնակչություն: «Մեր նախնի Հայկի զալուց առաջ մեր յերկրի շատ տեղերում ցիր ու ցան առպել են վոչ մեծ թվով մարդիկ» (Մ. Խորենացի, I գիրք, զլուխ Ժր.): Անշուշտ, Խորենացու այս առասպելն ուրարտական ծագում ունի: Հայտնի յի, վոր մեր թվականությունից 7—8 դար առաջ ուրարտական հղոր պետությունը արշավանք և կատարում զեպի հյուսիս, իսկ այդ արշավողները ապկում եյին մեր յերկրի հարավում, Վանսա լճի մոտերքում:

Ուրարտական հղոր տիրակալ Արգիշտին, անցնելով Արարա-

տի փեշերով, դալիս հասնում և Արագածի ստորաները, զրաւ  
փում և իրեն և յենթարկում այսուղ ապրող բոլոր կիսավայ-  
րենի ցեղերին, ամրացնում և այժմյան Ամրերդ ամրոցը, վորս  
անշուշտ ուրարտական ծագում ունի Արգիշտին այնուհետև անց-  
նելով Թասախ դեսի հովտով՝ գրավում և Արագածի արևելյան  
լանջերը Ամրացներով այդ լանջերը Ղազնաֆար զյուղի մոտ,  
Նրա վերին մասում, Գեղովիխար աչ և ձախ բարձրունքների գոռ-  
գավորությունների մեջ կառուցում և ամրոցներ, ինչպես որինակ,  
կուսաբերդ, Ամասի ամրոցները և այլն, Վորոնց մնացորդները  
մինչև մեր որերը դեռ մնում են:

Ուրարտական տիբական այնուհետև Թասախի կիրճով և  
Ապարանի ուսուլ գնում և մինչև այժմյան Ղանլինջա գյուղը և  
այնտեղ կառուցում և Մարմաշենի՝ (այժմ Ղանլիջայի) ամրոցը,  
վորտեղ մինչև որս ել պահպանվում և Արգիշտիի սեպաղիր ար-  
ձանագրությունների մասին:

Ահա միանգամայն իրավացի պետք ե համարել գիտնական-  
ների այն յենթալրությունները, վոր Արագածն առաջին անգամ  
յարջ ուշադրության և արժանացել ուրարտական հայտնի նվա-  
ճող Արգիշտիի կողմից, ուստի Մովսես Խորենացու նշած այդ  
Արմենակն եւ վորակես առասպելաբանության մեջ հիշվող մի  
անձ, վոչ այլ վոր ե, յեթե վոչ նույն ուրարտական Արգիշտին:

Արագածի գովերգումը հրաշալի պատկերներով և վոգեվո-  
րությամբ տվել ե նաև հինգնորդ գարի մի ուրիշ պասմի՝ Ղազար  
Փարպեցին: Այդ, ամենայն իրավամբ կարելի յե ասել, մի ար-  
ձակ բանաստեղծություն ե, զրված հայոց Արշակ թագավորի հայ  
յերկրից հեռանալու առթիվ, յերբ Հայաստանը կորցրեց իր ան-  
կախությունը և բաժանվեց սլարսիկների և հունաց աշխարհակալ  
ովետությունների միջև։ Պարսիկներին անցան՝ «զրախտի նման,  
Արշակունյաց ազգի սեփական, բնիկ կալվածները»՝ Վաղարշապատ  
քաղաքը, Արշակունյաց թագավորների մայրաքաղաքը...»։ Այդ  
առթիվ Ղազար Փարպեցին նկարագրում և շրջակա լեռները, և  
այդ նկարագրությունն անշուշտ այստեղ վերաբերում և Արտա-  
ծանին և Արագածին:

«... Նրանց (այդ լեռների) բարձր գագաթներից հօսում  
են առատ ջրեր, գաշաբերը ջրելով՝ լիառատությամբ անզակաս  
մատակարարում են բազմաթիվ այր և կին բազմությամբ լցված

թագավորական քաղաքին հաց և կինի, անուշահոս, քաղցրահամի  
քանջարներ և զանազան յուղալիսեր իսկ գեաբի լանջակողմերն  
ու սարահարթ տեղերը, յեթի մի նոր տեսնող մարդ իրեն աչքերը  
դարձնի, հանգերձներ կկարծի, և վոչ թե ծաղիկների զույներ,  
առարածված համով ու հստով: Նրանց թանձր ու առատ խռաերն  
արտական, ընտանի անթիվ եզերի ու վայրենի, կատաղի կեն-  
դանիների խմբերին կշտացնելով՝ նրանց մոբթիներն են թանձ-  
րացնում, գավակները գերացնում և պարարտությամբ ամրող  
մարմինը համատացնում: Իսկ անշուշտ ծաղիկների առատ հոտը  
նմատավար, վրասաներ քաջ մարդիանց և ցերեկ պիշեր անդումն  
ապրող հովիմներին՝ առողջություն և պարզեւում, լոելքի զգայու-  
թյուն և գորացնում ու նորոգում: Այնանդ գանգում են խելա-  
ցի ու հմուտ բժիշկների ստուգազույն խոսքին համաձայն դեղերի  
ոգուակարության համար՝ զանազան տեսակ բույսերի արմատ-  
ներ, և հիվանդություններն արագ բժշկող սպեզանիք, վորոնք  
յերկար ժամանակ ցավերի մեջ տանջնողներին աւալիս են առող-  
ջություն: Իսկ գաշտերի՝ ամեն անսակ բարիքներով չափազանց  
առատությունը գրավում, քաշում և աշխատասեր մարդկանց,  
ինչպես իշխանական հրամանով, և այս այն բարիքով լիայ-  
նելով նրանց՝ միանգամայն հրապուրում ամիսի և շուտով դե-  
պի իրանց գառնաւլք:

Այսպիսի հրաշագնդ բարիքներով լիքն են ու առատ Արա-  
գածի հարավային լանջերը՝ պատմական Արագածոտնը, վորի  
մասին այսպիսի վառ գույներով և վոգերությամբ պատմու: Ի  
Պազար Փարավեցին:

Այսուհետև հայ պատմագիր Ալիշանը, նկարագրելով Աշ-  
րորատյան գեղեցիկ յերկիրը, այսպիս և պատկերացնում Արա-  
գածը.

«Իբր ի կիսոյ մայիս ամսոյ ցվերջ կոյս սեպանմբերի՝ յոյժ  
գեղեցիկ և զմայլական երեսյթս ընծայէ լետոնն՝ օժանդակու-  
թեամբ ջուրց և օդոց յատակությամբ, քաղցրահոս բուրմամբք, և  
երանգ երանգ ծաղկօք, յորս դեղինն և յաճախագոյն, այլ և կա-  
պուտագոյն Շուշանք վայրիք կամ Հիբիկք շառափայլ կակաչք՝  
Բողք կամ Հոռոմ—երն ջանք, կաթնեղնիճք կամ Զան-  
գակած աղիկք, Զագախոս սաղնորակ... և այլք պեսպես յո-  
րոց՝ զմայլամամբ քաղեր բնասէրն վահներ գերմանացի, յամի  
1843... և այն:

(Ալիշան՝ «Արարատ», եջ 131):

Կառի մի այլ տեղ Սկիշանը զբում է.

«Զուրք և գիտք դաւախիս (Արագածոտն գավառ—Վ.Վ.) զբեռութէ բովանդակ ի մեծէ լինեց (Արագածի մասին ե—կ. Դ.) աստի իջանեն և զնան ընդ ամենայն կողմանս, արրուցանելով զանգառան և զայդիս»:

(Ալլշան՝ «Այլաբառ», Էջ 132):

\* \*

A 30998  
262  
Սրագածի պատմությունը հայ ժողովրդի պատմության մեջ փառավոր եղ և կարմում: Մեր այս նյութից զուրս լինելով այդ հարցը, նրա լուսաբանումը թողնում ենք մի այլ ժամանակի: Այստեղ անհրաժեշտ ենք համարում հիշատակել վոր Արագածը շրջապատված եր Հայաստանի յերեք պատմական զավառներով՝ մի կողմում՝ Արագածոտն եր, մյուս կողմում՝ Շիրակը, ինչ յերրորդ կողմում՝ Նիգ (այժմյան Աղարան) զավառը: Այդ զավառները, ինչպես արդեն մի անդամ նշել ենք, գեռ հին ժամանակներից ունեցել են խիստ ազգաբնակություն, վորոնց զինավոր զրագուենքն և յեղել հողագործությունը և անասնապահությունը: Արագածն իր առասա ջրհրով հողագործ զյուղացու ապրուսի առաստաղուցն ազգյալքն և հանգիստացիր, վոռագման բաղմաթիվ տեսակներով: Արագածից հոսող առաս ջրերի շնորհիվ նրա փեշնբին զարդացել և և ծաղկել այգեսործությունը, բանջարաւուծությունը: Շիրակը հայտնի յե յեղել իր հացահատիկային մշակություններով, այդ առասության մասին ժողովուրդն անել և՝ «թէ քո Շարայի որկորն ե, մեր Շիրակայ ամբարքն չեն»: (Յեթէ քո վորկորը Շարայինն է, մեր ամբարները Շիրակինը չեն): Ինչպես պատմում ե մեղ Մովսես Խորենացին, այդ շատակիր Շարան Հայկ Եահապեսի թոռն-հ յեղել: Արմենակի հաջորդը՝ Արագայիսը, «Բ ա զ մ ա ծ ի ն ու շ ա տ ա կ ե ր Շ ա ր ա յ ի ն ա ն ո վ ո ե ղ ո վ ո ւ զ ա ր ի ն ց Ա ր ա գ ա ծ լ ե ռ ա ն հ յ ո ւ ս ի ս ա յ ի ն կ ո ղ մ ե ր ը, Ա լ ո ւ ր յ ա ն զ հ ա տ ի մ ո տ մ ի ո ւ զ ա ր ե ր ու ր ն դ ա ր ձ ա կ զ ա շ ա տ, վ ո ր ն ր ա ա ն ո ւ ն ո վ հ ե տ ո կ ո չ զ ե ց Շ ի ր ա կ ի ։ Շ ա ր ա յ ի վ ո ր կ բ ա մ ո լ ու թ յ ո ւ ն ը հ ա յ ժ ո ղ ո վ ր դ ի մ ե ջ ա ռ ա կ ե ր գ ա ր ձ ե լ և մ ի ն չ ե մ ա յ ե լ Շ ի ր ա կ ի հ ա յ ժ ո ղ ո վ ր դ ի մ ե ջ ա ռ ա կ ե ր մ ա ր գ ու մ ա յ լ ա յ լ պ ե ս ե ն ա ս ո ւ մ: Ա յ ս ա ռ ա ս պ ե լ ի ց յ ե ր ե ռ ու մ ի վ ո ր ք ա վ ա ռ ը ա ն ց յ ա լ ո ւ մ յ ե ղ ե լ և ն ո ւ յ ն ք ա ն պ ա ր ե ր, վ ո ր ք ա ն ա յ ս ո ր վ ա Շ ի ր ա կ ի ։

Ն ի գ զ ա վ ա ս ի լ ե ռ ա ր ն ա կ ժ ո ղ ո վ ո ւ ր ք ն ե ր ը, հ ա յ ե ր ը, ք ր դ ե ր ը,

աղբը եջանցիները, վորոնց զլիավոր զբաղմունքն է յեղել լսաշն  
նարածությունը, առատության բարիքներն ստացել են իրենց  
սիրելի Արագածից, ինչպես հարազատ մորից:

Ամառը Արագածի թափապատ, բուրալից լանջերը ծածկ-  
վում են հարյուրավոր սպիտակ վրաններով և քարաշեն տնակ-  
ներով: Հազարավոր աշխատավոր գյուղացիներ բարձրանում են  
յայլաները, վորտեղ ամբողջ ամառվա ընթացքում առատ կերկա-  
իրենց անսառների համար: Աշնան սկզբին իրենց սայլերը;  
ձիերը բարձում՝ իջնում են յայլաներից, բնենավորված յուղի,  
պանրի հսկայական պաշարներով:

Այժմ, յերբ խորհրդային կարգերը հաղթանակել են զյու-  
ղում, Արագածի վրայից անհետացել են նախկին բեզերի և աղա-  
ների որաներն ու յայլաները: Այժմ այնտեղ արածում են կոլ-  
տնտեսային հոտերը, և նախկին ճնշված ու լքված չորանի մելա-  
մաղձոտ ու հուսակտուր մեղեղիների վոլխարեն: Արագածի գաղաթ-  
ների տակ հնչում են նոր մարդու ազատ ու լիաթոք յերգերը, նոր՝  
ուրախ ու յերջանիկ սոցիալիստական կյանքի որատուխ յերգը:  
Յեվ հայ շինականի՝

«Դարդս լացնք, սարի սմբուր,

Ալվան-ալվան ծաղիկներ»-ի

կամ՝

«Աև մութ ամպեր ճակտիս դիղվան,

Դուման հագար, Ալաղյազ»-ի փոխարեն,

Այժմ կարկաչուն ազբյուրների, սարի սմբուլների, շուշան-  
ների բյուրավետ միջավայրում հնչում ե կոլտնտեսական հովվի  
սրտաբուխ յերգը, իր իսկ կողմից հորինված.

...Ալաղյազին դիպակ շողը,

Տքակտորը քցին խողը,

...Կուլակի խոր կողը:

Այ տրակտոր, խան արակտոր,

Շուտ արի մեցիան, տրակտոր:

(«Հայկ. խորհրդ. Փոլկլոր», 42 90),

Ալաղյազ բարձր տեղ ա,

Զուրքը հիվանդի դեղ ա,

Չորան սիրածին առավ,

Ի՞նչ լավ ման գալու տեղ ա:

Բյուբական գյուղի կոլտնտեսական Մելիք Մարտիրոսյանը  
գովարանում և Արագածը, վորը սոցիալիզմի յերկրում ամբողջապես  
ծառայում և ժողովրդին, դարձել եւ մատչելի: Եեթե հին  
կուլտուրան բարձրանում եր մինչև 1200 մետր՝ բարձրության;  
վորտեղ կառուցվում եյին ամբոցներ, ինչպես ամենաբարձր Ա. մ-  
բերդ ամրոցը, ապա նորը սոցիալիստականը բարձրացել է  
մինչև 3250 մետր բարձրության; վորտեղ կառուցված եւ Խորհըր-  
դային Միության մեջ բարձր ողեր եռութարան ական կան կա-  
յաններից մեկը, Սև լճի ափին, վորտեղ տարվա բոլոր ա-  
միսներին խորհրդային մարդիկ դիտումներ են կատարում, ի-  
րենց ծառայությունը մատուցելով խորհրդային առաջավոր գի-  
տությանը: Արագածի հարավային լանջերին ընկած Բյուրական,  
Ջրգովլ, Դըղըր, Խնաքլու և մյուս մի շարք գյուղերի բնակիչնե-  
րից շատ շատերը, վորոնք իրենց յայլաներից ավելի բարձր չե-  
յին գնում: այսոր մեծ նիրով են ռազեկցում խորհրդային յերկ-  
րի բոլոր մասերից յեկող տուրբաններին դեպի Արագածի գա-  
գաթները, անգամ ձմեռվա դաժան սառնամանիքների ժամա-  
նակ: Ահա թե ինչու մեծ սիրով նրանք յերգում են Մելիք Մար-  
տիրոսյանի հորինած յերգը.

Ալագյաղ բարձր սար ե,

Զորս հաջանե բոլոր քար ե,

Շորագոլի վրեն դար ե,

Զուրդ լալս ե, ջան Ալագյաղ:

Ամպեր կուգան քուլաքուզ,

Զորս զագաթը բոնված մառախուզ ա,

Քամիդ չորս կողմից կուգա,

Զուրդ համեղ ե, ջան Ալագյաղ:

Գագաթը բարձր չե, յերկար,

Արարատին միշտ նման ե,

Քարը վսկեղին գոհար ե,

Զուրդ սառն ե, ջան Ալագյաղ:

Ուսասաւանից մինչև Հայաստան

Ղմբող Յեվրոպան զարմանա,

Քագաթիդ վրա մարդիկ բնակվեցան,

Ողիդ համար, ջան Ալագյաղ:

Գալգաթից բաժնոված է չորսից

Այժմ դու մեզ հետ խոսի,

Գետնիդ տակ ունես վոսկի,

Շատ ուրախ ենք, ջան Ալաղյաղ:

Քյուրականն արին ըստանցի,

Քո վրեն անակ շինեցին,

Հայ, վրացի բնակվեցին

Ողիդ համար, ջան Ալաղյաղ:

Մելիք Մարտիրոսյանից զովասանած;

Մայիս-հունիս այնտեղ ման զատ,

Նոր բանաստեղծ կղապնաս,

Մեկ հավա յև, ջան Ալաղյաղ: \*)

\*\*

Եերկար դարեր շարունակ հայ ժողովրդի մեջ պատմվել է  
և հետագայում սերնդից-սերունդ և անցել Լուսավորչի կանթնդի  
առասպելը, վորն իբր թե կախված է յերկնքից, Արագածի վրա,  
առանց պարանի: Խնչպես հայոնի յե մեզ հայ ժողովրդի պատ-  
մությունից, մեր թվագրության IV դարի սկզբում մեծ հեղա-  
շրջում կատարվեց մեր ժողովրդի կյանքում, յերբ հաշակավոր,  
քաղաքակրթված Տրդտա մեծի որոք, նրա արքունական քար-  
տուղար Գրիգոր Լուսավորչի ջանքերով, քրիստոնեյությունը  
մուտք գործեց Հայաստան: Մի քանի տասնյակ տարիներ շա-  
րունակ քանդվում ելին հին հեթանոսական կուանները՝ մեհյան-  
ները, և նրանց փոխարեն արմատավորվում եր քրիստոնեյական  
յեկեղեցին, իր նոր, լուսավորչական քարոզներով: Այդ, իրաք,  
վորոշ առումով կուլտուրական և քաղաքական մեծ հեղաշրջում  
եր հայ ժողովրդի կյանքում, առաջազդիմական մեծ քայլ եր, վորը  
կատարվում եր Գրիգոր Լուսավորչի և նրա հետեւրդաշակերտ-  
ների յեռանդուն ջանքերով: Ահա այդ Գրիգոր Լուսավորչի կան-  
թեղի հայտնի առասպելն ե, վոր այսպես սերտ կերպով կապել և  
ժողովուրդն Արագած սարի նևու: Այդ կանթեղը վասկոմ և այն  
ժամանակ, յերբ մութը ծածկում է հայոց աշխարհը, վասկում  
և վորպեսզի լուսավորի հայոց «մութ յերկիրը» (Հ. Թուման-

\*) Տպագրվում և առաջին անգամ: Գրի յեմ առել յև Բյուրականում՝  
1939 թ. ամառվա եքսպեդիցիայի ժամանակը Վ. Դ.

յան): Արդյոք հայոց այդ շանտակ վիճակը (Հ. Թումանյան) պարսկական, արաբական, թուրք մեջուկների կամ այլ ոստարերկրյա բանտակալների կրնելի տակ հեծող յերկրի ժողովրդի հեծ կըլատանը չէ, անհույս հավատը զեղի յերկինք, զեղի անորոշը վորտեղից ունեաք և լույս ծաղի, վորտեղից պեսաք և զա իր համար աղատություն բնարդ մեծ ուժը:

Դուցե՛ և այսպես: Ահա յերեկոյան մթնշաղին, յերբ վերջաշ լույսի վերջին ցոլքերը սկսում են մարել և թագնվել հեռավոր հորիզոնի հետեւում, յերբ խավարի մոռայլ քողը ծածկում և Արարատյան և Երրակի գաշտերը, իսկ լեռների գոգում ապաստանած Արարատնի լեռնային գյուղերում յերեկոյան ճրագն և վառվում իր աղնոտ լույսով, Արագածի վրա, որա չորս գագաթների մեջ տեղում մի յերկար ցողը և կախված լինում, վորբ կարծես կանչ թեղ լինի՝ յերկնքից առանց պարանի կախված, վորբ պատրաստ վում և գիշերվա մթին գիմավորելու իր հրավոր լույսով և լուսավորելու հայոց աշխարհը:

Մեր տաղանդավոր բանառենեղծները՝ թե՛ Հով. Հովհանն ախյանը և թե՛ Հով. Թումանյանը չեն մոռացել սրատառուչ տողեր հավերելու նաև այս հրաշագեղ տեսարանին Արագածի վրա: «Լուսավորչի կանթեղը» վերնազրավ իր գոտանավորի մեջ այդ յերեւյթն այսպես և պատկերացնում Հով. Թումանյանը:

Կես զիշերին կանթեղը վտա,  
Կախ և ընկած յերկնքից,  
Լուսավորչի կանթեղն ահմար  
Հայոց մթնած յերկնքից:

Կախ և ընկած առանց պարան,

Արագածի կատարից,

Ու սեղանից հսկայական,

Լույս և տալիս աշխարհին:

Լույս և տալիս յերկար դարեր,

Ու վառվում են միշտ անշեշ,

Սրբի մաքուր արցունքները

Յուղի աեղակ նրա մեջ...

Պոչ մարդկային ձեռ կհասնի

Են ահավոր բարձրունքին,

Ցեվ վոչ քամին կհանգնի,

Վիշապ քամին ահավոր:

(Թումանյան, յերկր, հջ 60):

Իսկ իսրահրդային յերիտասարդ շնորհալի բանաստեղծ չով.  
Եիրազը «Հուսափորչի կանթեղը» (պարողիա) վերնագրով իր բա-  
նաստեղծության մեջ, անգրադառնալով Արագածի վրա կախված  
կանթեղի առանցքիվն, բոլորովին այլ մոտեցում ունի: \*) Կարելի  
յի ասել վոր Եիրազի մոտ այդ ավանդությունը, վոր գալիս և  
մեր պապերից, սոցիալիստական լուսարձակի շողերի տակ իջա-  
նում և Արագածի գագաթից և լուսավորում և դարերից ի վեր  
խավար ու մութ զյուղական խթճիթները և նոր կուլտուրան մըս-  
ցընում և ժողովրդի կենցաղի մեջ, «Գյուղական իդիոտիզմը»:  
անկուլտուրականությունը, ինչպես Կարլ Մարքսն ե ասում, անցյալ  
հասարակություններին հասում՝ զյուղական աշխատավորության  
այդ անտառնելի գոյավեճարկը, անհետ կորավ շնորհիվ Հոկտեմ-  
բերյան Սոցիալիստական Մեծ հեղափոխության: Այժմ՝ մեր  
զյուղում նոր՝ սոցիալիստական ուրախ ու յերջանիկ կյանքն և  
տիրում, վորը նոր կանթեղի՝ Շիրկոնալի, խորհրդային Եիրակի  
ելեկտրիֆիկացիայի կրակներով և լուսավորիվում:

Յեկ ահա այժմ Եիրակի աշխատավոր ժողովուրդը, ինչպես  
նրա պապերը, ամեն յերեկո, վերջալույսի մարելուց հետո, այլև  
ևս չի նայում Արագածի կատարին և չի սպասում, վոր յերե-  
կոյան աղջամուղջին կանթեղը վառվի այստեղից, բարձրից, այլ  
սպասում և Եիրականալի հիդրոկայանին, թե յերբ բաշխման  
տախտակի մոտ կանգնած բանվորը կվոլորի ելեկտրական անիվը,  
և մի ակնթարթում կվառվեն հազարավոր ելեկտրական կան-  
թեղներ՝ իիհի բոցավառ կրակներով կվողուն դաշտ ու գյուղ,  
դործարաններ ու հանքավայրեր և լույսի առն կլինի հինա-

\*) «Հուսափորչի կանթեղի» առանցքի ծագման մասին, գիտական հե-  
տաքրթիր աեղեկություններ և ատլիս Միք. Նալբանդյանը իր «Կըրտիկա» աշ-  
խատության մեջ, Հայ Խոշոր գեմակը աղքատ զործիչը, Պետրոնավիլովսկ ամբողի  
քքարե պարկերից մեջ պարփակված յերազում եր, թե յերբ կոտ այն ժամա-  
նակը, յերբ հայ գիտականները կուսումնակիրն Արագածի վորպիսությու-  
նը, իսկ ինքը զրում և «Հուսափորչի կանթեղի» կրօնական, զոչ գիտական  
ծագման մասին: Նա խիստ քննադատության յենթարկելով կրօնական միս-  
տիցիզմի շղարզով ծածկված այդ առանցքի ծագումը, զիտական շատ հետա-  
քքրթիր աեղեկաւթյուններ և տալիս, Արագածի գագաթին մի շարք բնական յե-  
րեվույթների շնորհիվ յերեսն կրակ յերեալու ղեպերի մասին, վորը ժո-  
ղովուրդին լնդունել և «Հուսափորչի կանթեղի» աեղ, իսկ յեկեղեցին շապեկ և  
սրբազործելու այդ կրօնական բնույթ ատլով այդ բնական յերեսութիւնը, վորը  
Միք. Նալբանդյանն անվանել և «Հելմոսի կրակ կը ակներ»: Այդ մասին  
մանրամասն կզբի մեր «Արագածի աշխարհաղբությունը» աշխատության  
մեջ, վորն այժմ պատրաստվում և տպագրության համար: Հեղինակ

վուրց Շիրակի, բոլոր բնագավառներում: Իսկ Աղադանն այսոք  
զրկում և միայն աստղերը և էկառուից զմբաւիս սրտին բնկնօւմ ցած»:  
Ահա թե ինչպես և յերգում «Լուսավորչի կանթեղը» բա-  
նաստեղծ Հովկ Շիրազը:

Յերբ վոր ջանել Արագածի ծեր գլխից,  
Խըիկունն և ծածկում Շիրակն ու հեռուն,  
Ել վոչ մի աչք ցնորաբույր յերկյուղից  
Զի սպասում այն կանթեղի վառվելուն:

Ու չի վառվում յերկնանման կառարին  
Վոչ մի կտնթեղ, վոր վառվել եր դարերով  
Աստվածավախ մեր պապերի ուղեղին՝  
Իբրև ավանդ լցված վոսկե հույսերով:

Սակայն գիտեմ՝ նախահայրերն իմ բոլոր  
Խրենց հեռու խրճիթներից այն մթին,  
Ամեն գիշեր յերազել են գլխիկոր՝  
Մի լույս կանթեղ տեսնել լեռան ճակատին,

Վոր բարձրունքից լույսը շող տար և շողեր  
Կանթեղի պես ցոլար կյանքի խալարում.  
Ու աստղեր են հանգել անթիվ ու դարեր,  
Բայց կանթեղը լեռան գլխին չի վառվում:

Ու միշտ՝ յերբ ծեր Արագածի գանն արծաթ  
Վերջալույսն և վոսկեկոծում ու մարվում,  
Բարձրունքներից յես նայում եմ մեր անթարթ  
Կանթեղներին, վոր Շիրակից\*): Են վառվում:

Այդ պապերիս յերազներն են կյանք առել  
Վոսկերյուրեղ կրակներով իլիչի,  
Ու գիշերն ե լույսից հեռու ծվարել,  
Դարեր անցնեն՝ վոչ մի կանթեղ չի հանգի:

Ու նիբնում և Արագածը յերկնքում  
Լուսավորչի հին կանթեղը մոռացած...  
Լոկ աստղերն են զրկում զլուխն ու յերգում  
Ցեղ կարոտից զմբուխտ սրտին ընկնում ցած:

(Հ. Շիրազ, Յերկեր, եջ 216—217):

\*) Շիբ-կանալից

Խորհրդային Հայաստանի յերիտասարդ պոետները մեծ պատիանով և գողեորությամբ են յերգում Արագածի լանջերին ծաղկող յերջանիկ կյանքի մասին, վեհ ու հպարտ Արագածի մասին և ամենամեծ նվերը Խորհրդային Յերկը սրտին—կրկմլին, Առցիալիզմի Մէծ Գործի գեկավարներին—Արագածից են տանում: Այսպիսի տողեր կարելի յե գտնել մեր յերիտասարդ բոլոր գրողների մոտ:

Եշանակալից են յերիտասարդ բանաստեղծ Սարմենի հետեւյալ տողեր՝ նվիրված Արագածին.

— Ո՞վ Արագած, Հպարտ ու վեհ,  
Գնում եմ յես Կրկմլլ վառ,  
Ի՞նչ ես տալիս՝ տաննմ նվեր  
Մեր ցնծության, մեր հոր համար:

— Իմ լանջերին անվերջ հնչող  
Յերջանկության յերդ ու տաղից  
Փնջիք յերգեր արևաշող,—  
Ահա ընծառ յերախտալից:  
(Սարմեն, «Նվեր», հջ 2):

Հայ յերաժշտագետներից Արագածը սիրել և Արագածի մասին յեղած ժողովրդական յերգերը մշակել են հայ շինականի յերգի տաղանդավոր յերգիչը՝ Կոմիտասը: Նա յերգեր և հորինել Արագածի լեռնաբնակ քրդերի կյանքից, քրդական դյութիչ ու ըրբնորդի վրա, վորոն այսոր ել այնքան հմայիչ կերպով հնչում և Արագածի լանջերին:

Սնշուշտ, այդ վեհ իդեան եր, վոր նրան մզում եր գեղի Արագածի լանջերը, քըդական, ազրբեջանական և հայկական որաներում լինելու և մոտիկից ծանօթանալու նրանց կյանքին և կենցաղին, լսելու նրանց յերգն ու տաղը լնոների զրկում, տեսնելու Արագածի վեհանիստ գիրքը Արարայան զաշտի կենտրոնում, դիտելու նրա գուգաթից մեր հոյակապ լեռնաշխարհը:

Յերբ յերաժշտագետ հոմիտասը 1910 թվին յերկորդ անդամ բարձրանում և Արագածի գագաթը, ի շաբա մյուս յերգերի, ինչպես՝ «Սարերի վրով գնաց» և այլն, զրում և նաև «Աղազգալին» վերնագրով քաղցրահնչուն յերգը:

Հայ ժողովրդի լավագույն պոետները, պատմիչները, յերաժշտագետները և բազմաթիվ այլ բնադրավառների ականավոր

գործիչներ, ինչպես նույն յևրոպայի ականավոր գիտնականներ բազմաթիվ վերելքներ են կատարել դեպի Արագածի կատար ները և մեծ գոհունակությամբ ու վոգեվորությամբ բանաստեղծական սրտառուչ տողեր են նվիրել և բազմաթիվ նկարագրություններ են գրել հրաշալի Արագածի մասին:

Հեռու չե այս ժամանակը, յերբ Արագածի բոլոր լանջերը կծածկվեն տուրիստական ճամբարներով և հանգստյան տներով, վորակեղ սոցիալիստական յերկրի յերջանիկ մարդը կվայելի Արագածի բոլոր հրաշալիքները:



# ԱՐՄԵՆԻԱ

Եռաբարձրաց պատրիարք  
Կոմիտաս առ առ առ առ  
Վրան առ Արև առ առ  
Տաղ առ առ առ առ առ առ

Հայութ առ Արք առ  
Առ պատրիարք առ առ  
Մահմետ առ Առ առ առ  
Առ առ պատրիարք առ առ

ԺՈՂՈՎՐԴԻ ԱՐՄԵՆԻԱ ԱՐՄԵՆԻԱ

Հայութ առ պատրիարք  
Տրակար առ պատրիարք  
Վահագ առ պատրիարք

## ՆՄՈՒՑՆԵՐ

ՅՈԼԿԱԼՈՐԻՑ ՅԵՎԼ ԱՅԼ  
ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

## ԱՐԱԳԱԾԻ ՄԱՍԻՆ

ԳԵՐԵՎԱՐ

ԽՈՅ ԲԵՋՈՒՄ ԽՈՅ  
ՂՈՅՄ ԵՐԱԿԱՆ ԲԵՋՈՒՄ

ՀԱՅՈՒ ԽՈՅՔԱՆ

# ԱԼԱԳՅԱՋ

Մառախլապատ քո զագալթդ,  
Կրծքից համեղ ե քո կաթդ  
Ծըծում եր Աշոտ Յերկաթ,  
Յույց տնկր, քո արձան, ջան Ալագյազ:

Համբերդն ու Արխաշան,  
Սև բերդն ե մեծ նշան,  
Տիրում եր Սմբատ իշխան,  
Ուր ե իշխանդ, ջան Ալագյազ\*),

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՅԵՐԳԵԲ ԱԼԱԳՅԱՋԻ ՄԱՍԻՆ \*)

...Ալագյազին գիտավ շողը,  
Տրակտորը քցին խողը  
...Կուլակի խոր կողը:  
Այ տրակտոր, խան տրակտոր,  
Շուտ արի մեյդան, տրակտոր  
(«Հայկական խորհրդային ֆոկլոր», էջ 90)

Ալագյազը տուն ունիմ,  
Մեջը վոսկե ոյուն ունիմ,  
Քաշվե, քյովովու գյաղա,  
Քեզպես հազար շուն ունիմ:

(Բողոքանովկայի Հրջանի Փ. Խանչալի գյուղի գեղջիկուհի Վարվառա  
Բղոյան)

Ալագյազ բանցր սարին  
Զյուն ե կիտվել կատարին,  
Արի, թառլան, թե տնկր լնձ,  
Թըռնեմ խասնեմ իմ յարին:

(Կոտայքի Հրջանի Յելլովան գ. գեղջիկուհի Սըբուհի Հակոբյան)

Ելել եմ Ալագյազը,  
Կողքիս կախել եմ սաղը,

\*) Գրի ե առնված 1939 թվի Արտգոճի գավառուղիտական եքոսեղից ցիայի կողմէից.

\*\*) Այս յերգերը նույնությամբ գրի յե առել իմ խնդըանքով ընկ Վարդ Բղոյանը վ. Դ.

Չեմ առնի մալումաղը,  
Կերթամ կընկնեմ Արազը:  
(Կարբեցի Մկրտիչ Սիմոնյան)

Ծաղկավանքա դշերը,  
Խորովածի շշերը,  
Ծոցք մտնեմ քշերը,  
Պաչեմ խալ-խալ թշերը:  
(Մուղնեցի Տ. Պողոսյան)

ՀԱՆԳՅՈՒԼԻՄԻՄՆԵՐ\*)

Ծաղկավանքա դշերը,  
Զան, գյուլում, ջան, ջան,  
Խորովածի շշերը,  
Զան, ծաղիկ, ջան, ջան:  
Մհեմնեմ բողբող ռանզիր  
Զան, գյուլում, ջան, ջան,  
Ուր են կարմիր թշշերը,  
Զան, ծաղիկ, ջան, ջան:

Ծաղկավանքա ձորեր են,  
Զան, գյուլում, ջան, ջան,  
Մեր բաղի խնձորեն են,  
Զան, ծաղիկ, ջան, ջան:

Քամի տվեց վեր գլցեց,  
Զան, գյուլում, ջան, ջան,  
Շեկ յարիս մոլորել եմ,  
Զան, ծաղիկ, ջան, ջան:

Ծաղկավանք ձյուն ե զալիս,  
Զան, գյուլում, ջան, ջան,  
Ծաղիկ մեր տուն ե զալիս,  
Զան, ծաղիկ, ջան, ջան

\*) Այս և մյուս ժողովրդական յերգերը Արագածի մասին գրի եմ առել յիս 1930 թ. ամառը Արագածի եքսպերիմենտալ ժամանակը՝  
«Զանզյուլումներ» գրի ետեր ընկերությանը (Ուսանավանք գյուղից): Վ. Դ.

Գյուղից փախան կուլակներ,  
Զան, գյուլում, զան, զան,  
Բարի խաքար և գալիս,  
Զան, ծաղիկ, զան, զան:

Ալագյաղ բարձր տեղ ա,  
Զան, գյուլում, զան, զան,  
Զուրը հիվանդի գեղ ա,  
Զան, ծաղիկ, զան, զան:

Զորան սիրածին առավ,  
Զան, գյուլում, զան, զան,  
Ինչ լավ ման դալու տեղ ա,  
Զան, ծաղիկ, զան, զան:

Ալագյաղ սառն աղբյուր,  
Զան, գյուլում, զան, զան,  
Արծաթե թաս, վոսկե ջուր,  
Զան, ծաղիկ, զան, զան:

Մեկ յես խմեմ, մեկը դու,  
Զան, գյուլում, զան, զան,  
Սիրով լինենք յես ու դու,  
Զան, ծաղիկ, զան զան,

Ալագյաղ բարձր տեղ ա,  
Զան, գյուլում, զան, զան,  
Զորս բոլորը լավ գեղ ա,  
Զան, ծաղիկ զան, զան:

Իմ սիրածը վոր ինձ տան,  
Զան գյուլում, զան, զան,  
Յես ել կասեմ լավ տեղ ա,  
Զան, ծաղիկ, զան, զան:

Ալագյաղի ծառերը,  
Զան, գյուլում, զան, զան,  
Սուրու սուրու գառները,  
Զան, ծաղիկ, զան, զան:

Գագնելը յարս և պահել,  
Զան, գյուղում, զան, զան,  
Իմ սերը սրտումս և պահել  
Զան, ծաղիկ, զան, զան:

Խնձոր ունեմ կծած ա,  
Զան, գյուղում, զան, զան,  
Չորս կողմը արծաթած ա,  
Զան, ծաղիկ, զան, զան:

Արես ուղեց՝ չտվի,  
Զան, գյուղում, զան, զան,  
Ասի՝ յարի դրկած ա,  
Զան, ծաղիկ, զան, զան:

Ծաղկավանք ծաղիկ չկա,  
Զան, գյուղում, զան, զան,  
Իմ յարին մայրիկ չկա,  
Զան, ծաղիկ, զան, զան:

Աղջի, քո յարին բռնի,  
Զան, գյուղում, զան, զան,  
Ուրիշին իման չկա,  
Զան, ծաղիկ, զան, զան:

Աղջի, անունդ Շուշան,  
Զան, գյուղում, զան, զան,  
Արի տամ քեզինշան,  
Զան, ծաղիկ, զան, զան:

Քու գեյրեն և խշխան,  
Զան, գյուղում, զան, զան,  
Մատանիս տամ քեզ նշան,  
Զան, ծաղիկ, զան, զան:

Կարմիր կովը զըրմզի,  
Զան, գյուղում, զան, զան,  
Մախեմ տամ քեզ բուռնուզի,  
Զան, ծաղիկ, զան, զան:

Բուռնուլը հախ եմ արել  
Զան, գյուղում, ջան, ջան,  
Պատիցը կախ եմ արել  
Զան, ծաղիկ, ջան, ջան:

Կանգնել ես նավի վրա,  
Զան, գյուղում, ջան, ջան,  
Չինարի ծառի վրա,  
Զան, ծաղիկ, ջան, ջան:

Թուիլիկ կեսի յես զրել,  
Զան, գյուղում, ջան, ջան,  
Շելիկ քյանքյուլիդ վրա,  
Զան, ծաղիկ, ջան, ջան:

Աղջի, անունդ լինչ ա, ասա,  
Զան, գյուղում, ջան, ջան,  
Հաղիդ մինթանեն խաս ա,  
Զան, ծաղիկ, ջան, ջան:

Ես երկոր ո՞չ չեմ տեսել.  
Զան, գյուղում, ջան, ջան,  
Մի քիչ իմ խետը խսան,  
Զան, ծաղիկ, ջան, ջան:

## ԶՐՈՒՅՑ ԱՐԱԳԱԾԻ ՀԵՏ

Ու թե առած, սարեկ դառած, սար եմ կանչել յես մանկուց,  
Շատ եմ վաղեկ ու յերաղեկ սարի անտառն հինավուրց. \*)

Սիրով անմեռ նայում եմ գեռ Արագածին սպիտակ,  
Ծով Շիրակի գանձերով լի լիռնաշխարհը վոտքիս տակ,  
—Ու՞ր ին քար, պճապարտող գով անտառներն այն շքեր,  
Շանթն ե գարկեց կյանքից գրկեւ թե, մարդկային մի հին ցեղ:

• Յեկ՝ լսում եմ սուտակաղեմ Արագածի ձայնը խոռվ,  
«—Տերն հողվորից դաշտը իւլեց, նրան թողեց սարն ամոռ.

\*) Հազարամյակներ առաջ անտառներ են բոսափել Շիրակի լիռների վրա

Յեկ գյուղացին սրեց կացին, անտառն առավ ծնկաչոք,  
Քրտինք ցանեց, ցորեն հանեց, ինքը զարի կերավ լոկ—  
Յեկ այն որից սար ու ձորից ամպերն ինձ են գալիս դեռ՝  
Յերազներով այն խիտ ու զով անտառները թալշաներ»...

Լոեց սարը, և խավարը գաղաթներից չքացավ,—  
Արև աչքով, դալար մեջքով Շիրակ աշխարհն արթնացավ:

Հյուսվեց շողը, բուրեց հողը, Արփաչային ձայն տվեց,  
Արեն անշեջ՝ դաշտերի մեջ զարթնող կյանքը համբարեց:

Յերկինք յերկիր վարդակարմիր հանդես բացին արևով,  
Լեռների մեջ սիրուը բացեց՝ ծփաց քաղաքն ինչպես ծով:

Ու արեւ փռեց թեւ—մտավ ամրոց ու խրճիթ,  
Խորքերն հասավ ու կյանք տեսավ՝ համափուռեց լույս ժպիս:

Մանուկների ծով աչերին շոյեց սիրուց կենսաթով,  
Հանդ ու արտեր, ծիլ ու վարդեր մնեց անուշ իր կաթով:

Քաղաքն անգին արեգակին նայեց, փայլեց մանկան պէս,  
Դրկեց ապա իր բարձրագահ լեռնալարը վեհ ու վիս.

Կարծես նա ել յերազում եր (ինչպես մի որ յես մանկուց)...

Շիրակի ծով լեռնային զով անտառները հինավուրց:

Ա՛, բանեն թող նորից դյութնող մեր սարերին ծառեր շատ,  
Ծաղկանց միջով, զել կարկաչով վազե կյանքը մեր զվարի:

Հովը խաղա, ցողը տեղա անտառներից զովարեր,  
Ամեն մի սիրու նվիրական գտնի սիրու նոր ափեր:

Կարուտակեզ իմ սրտիս ուես Արագածն ել իմ բարի,  
Յերազում ե զմբուխտ ու վեհ ծով սալվերներն անտափ:

Ու կտեսնեմ կանաչ, վսեմ նոր անտառներ սարերին,  
Յեթե կյանքով, կամ թե յերգով ընկեր դառնամ գարերին:

(Հ. Շիրազ)

## Ա. Ր. Ա. Գ. Ա. Ծ. Ը

Գեղեցիկ ե Մասիս սարը՝ ձյուն գաղաթով յերկնավետ, (\*)  
Բայց չեն խոսում լուսակարկաչ աղբուրները նրա հետ:

Դեղեցիկ և Արագածը՝ ձյուն գագաթով յերկնավետ,  
Հավերժական զբույց ունեն աղբյուրները նրա հետ,—

Հավերժի պես ծուփ են գալիս գարունները ծով կը քիչն,  
Կուլ են դնում բյուր մեղուներ ծաղիկների հորձանքին:

Դողանջում են պերճ լանջերը վտակներով իր դանգակ,  
Ու աբակըն են իրար զգիում նրա կապույտ շուշի տակ:

Արծիվները թեզ են փոռում վոսկի ու վառ քերծերին,  
Ու վորսկանն է սիրո աչքով նայում թռչող այցամին:

Դյութական և Արագածը, յերբ աստղերի լուս ծոցում  
Լուսաշղարշ ամպերն ուսին, ինչպես հարսը ծաղկոցում,

Թուն և մանում սիրո խոսքից իր սրտաբուխ գիտերի,  
Վոտքին հովերն իմ Շիրակի, ճակտին համբույրն աստղերի:

Բայց գեղեցիկ ու անհաս և Արագածը յերկնավետ,—  
Յերբ արածում ու խոսում են լույս հոտերը նրա հետ:

Յերբ քյուրդ ու հայ հովիվների սրբնաների ձայնի պես  
Զով լանջերից գեպի աշխարհ բարին կիջնի փրփրագեղ:

Գեղեցիկը Արագածն ե՝ ձյուն գագաթով յերկնավետ,—  
Հավերժական զբույց ունեն կյանքն ու յերգս նրա հետ:

(Հ. Շիրազ)

\*  
\*\*

Ժիր ես, զվաթ, իմ սիրեկան,  
Արագածի յեղնիկի պես.

Կուախանձեր այն զյութական  
Արագածի յեղնիկը քեզ,

Թե վոր տեսներ բարակ մեջքդ,  
Խոր աշերիդ նայեր մի ոլահ,

Իսկ յերբ զգա սերը սրտիդ՝  
Դմոռանաթե կյանք, թե մահ:

(Հ. Շիրազ)

## ՆԱԽԵՐԳ

Իմ Արագած, Շիրակի մայր,  
Մորս նման անարատ,  
Կյանք և բղխում, կաթով ցողում  
Իմ հայրենի հողն ազատ:

Ծաղիկներդ ստիճանքներդ են,  
Ու թող ձձեմ յես կրկին,  
Վոր մանկանամ վատքերեղ տակ,  
Թիթեռ զառնա իմ հոգին:

Վոր յերբ անցնի, չճանաչեմ  
Իմ սիրածին աշագեղ,  
Մոռանամ սերն ու չտիրեմ,  
Ուրախ ճախընմ ամեն տեղ...

(Հ. Շիրազ)




ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



220030998

(204)

ԳԻՒԸ 2 Ր.



16907

Վ. ԼԱՐՅԱՆ

ԱՐԱԳԱЦ Վ. ԱՐՄՅԱՆՍԿՈՒ ՊՈԵԶԻԱ

Պրօնէդատ

Երևան,

տպ. Պրօնէդատ. Տերյան № 124

1949